ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/125

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.09.2018թ. թիվ 01.1/26-3/15926-18 գրությամբ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.08.2018թ. թիվ ԴՎԱ/3305 գրության հիման վրա, 04.09.2018թ. «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 31.08.2018թ. թիվ ԴՎԱ/3305 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/7 ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 21-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ն և վերջինիս ծանուցվել է ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման փաստաթղթերը:

«ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնակվորապես՝ ներկայացված տեխնիկական բնութագրում 21-րդ չափաբաժնի մասով նշված չէ հրավերում առկա տեխնիկական բնութագրով սահմանված կատալոգային կոդը:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցն մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում վերջինիս կողմից չի ներկայացվել որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները՝ որոշում է ընդունվել մերժել «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի հայտը»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 13.09.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/7 ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և 21-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղն զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը սահմանված ժամկետում բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել պահանջված որակավորման փաստաթղթերը:

Համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2018թ. ժամը 12:30 տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն արձանագրվել է՝ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 21-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերում նշված չէ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող կատալոգային կոդը:

Նույն կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցերել է հայտերի գնահատման նիստը պահանջելով շտկել անհամապատասխանությունը:

«ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում՝ 28.08.2018թ. ժամը 13:58 էլեկտրոնային եղանակով՝ Ընկերության համապատասխան էլեկտրոնային փոստից ներկայացվել է 21-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերի համապատասխան շտկված տարբերակը:

Սակայն, 29.08.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի ներկայացրել: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի

պահանջները, որոշել է մերժել «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի հայտը և որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել այլ մասնակցի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը, որը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ

արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է 28.08.2018թ., կատարել է 27.08.2018թ. թիվ 5 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանության շտկումը «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ին պատկանող sva-motors@mail.ru էլեկտրոնային հասցեից ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/7 ծածկագրով ընթացակարգի քարտուղարի a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին ուղարկելով պահանջված փաստաթուղթը:

Ոսումնասիրությունից պարզ է դառնում, որ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը, սակայն Ընկերության կամքից անկախ և անհասկանալի պատճառներով՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի ներկայացվել (հնարավոր ենք համարում, որ գնահատող հանձնաժողովը չի ստացել ներկայացված փաստթղթերը):

Ցանկանում ենք փաստել, որ այս պարագայում առկա չէ Ընկերության կողմից Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, իսկ տվյալ դեպքում առկա է «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի

կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում պատվիրատուի համապատասխան էլ. հասցեին ուղարկելու բոլոր ապացույցները:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 04.09.2018թ. թիվ 01.1/26-3/15926-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.08.2018թ. թիվ ԴՎԱ/3305 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/7 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/7 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 06.07.2018թ. ժամը 11:15-ին կայացած նիստի թիվ 4 և 27.08.2018թ. ժամը 12:20-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի կողմից 13.09.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բեռնատար մեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/7 ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/7 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

• N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/7 ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/7 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 06.07.2018թ. ժամը 11:15-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է Ընթացակարգի 1-ին, 2րդ, 4-րդ, 6-րդ, 18-րդ, 21-րդ, 25-րդ, և 28-րդ, չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշել է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/7 ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 02.08.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ն ծանուցվել է:

Հանձնաժողովը 27.08.2018թ. ժամը 12:20-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 21-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված չէ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված կատալոգային կոդը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)

47-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը արձանագրել է, որ սահմանված ժամկետում «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի ներկայացվել:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, Հանձնաժողովը որոշել է «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ն կատարել է արձանագրված անհամապատասխանությունների շտկում և սահմանված ժամկետում, այն է՝ 28.08.2018թ. ժամը 13:58-ին Ընկերության sva-motors@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից շտկված որակավորման բոլոր փաստաթղթերը ուղարկել է Հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին: Ընկերության ներկայացուցիչը համակարգչի միջոցով բացեց sva-motors@mail.ru էլեկտրոնային հասցեն և որպես ապացույց Բողոքներ քննող անձին ցույց տվեց, որ 28.08.2018թ. պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող բոլոր փաստաթղթերի շտկված տարբերակը ուղարկել է Հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց Պատվիրատուին՝ 28.08.2018թ. a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղղարկված նամակների կարճապատկերումները (screenshots):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների

պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):
- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 28.08.2018թ., էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել է Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին

համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը՝ Հրավերում նշված a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ն կատարել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետով պահանջվող պարտավորությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.09.2018թ. թիվ 01.1/26-3/15926-18 գրությամբ «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**